# ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## Սրտաբանության Գիտահետազոտական

## Ինստիտուտ ՓԲԸ

ք. Երևան, Պ. Սևակի 5

Հեռ. 28-85-50

28-86-90


N 40

«27» փետրվարի 2015թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Լ.Հովհաննիսյանի անվան <<Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ>> ՓԲԸ-ն կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՍԳԻ-15/2-ՇՀԱՊՁԲ-11/16»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, Պ.Սևակի 5, 1-ին հարկ, տնօրենի ընդունարան հասցեով, մինչև 2015թ. մարտի 11-ը, ժամը 11:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Է.Գրիգորյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Լ.Հովհաննիսյանի անվան <<Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ>> ՓԲԸ-ն շենքում ք.Երևան, Պ.Սևակի 5, 1-ին հարկ տնօրենի ընդունարան հասցեում, 2015թ. մարտի 10-ին, ժամը 11:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում Լ.Հովհաննիսյանի անվան <<Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ>> ՓԲԸ կարիքների համար Բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերումը:

Լ.Հովհաննիսյանի անվան <<Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ>> ՓԲԸ-ի կարիքների համար՝ Բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների մատակարարման (որոնք կազմված են՝ 202 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը ներկայացված են կից ներկայացված պայմանագրի նախագծի N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակիցները հայտով ներկայացնում են նաև իրենց կողմից համարժեքը առաջարկվող ապրանքների տեխնիկական նկարագրերը: